

ՆԱՄԱԿ ԱԳՔԻՐԱՆԻՑ.

ԽԻՇԱԳԻՐ—ԼԵՐԱՐԱԿ ԼՏԱՌՈՂՈՅ.

Ինչպէս Դպրոց մ' իր ծոցի հմուտ վարժապետներու ոգելից և ազգու զաստիսութեանց միջոցաւ տալուորութիւն կրնէ մանուկ ուսանողներու վրայ, այսպէս ալ լսարան մ' այլ և այլ առթիւ իւր մէջը տեղի ունեցած հանգէսներով, ճառերով և գրամաներով ներգործութիւն կրնէ շարահաս մարդկան վրայ, և կը տողորին այնպիսի հոգւով մ' ինչպիսի որ կը ներշնչին իրեն ամպիոնի մ' վրայէն, որ ազգային կրնայ ըլլալ:

Ահա այս համոզմամբ Ագքիրմանի Հայոց ծխական երկսեռ դպրոցի վարժապետներն, մերթ դպրոցի սրահն ընդհանուր դաստիսութեան իրր վայր մ' կը ներկայեն հայ ժողովրդեան, և նոցա ուշադիր ունկնդրութենէն և եռանդալից ծափահարութենէն խրախուսելով կը շարունակեն իրենց լսարանին գործը:

Ինչպէս որ խոստացանք, և ահա կը նկարագրենք հանդէսը, որ բաւական մփսթարական կրնայ համարուիլ առ այժմ: Իրենց անցեալն յիշելով. անցեալ մ' որ կ'յուսամ թէ իրօք անցեալ պիտի ըլլայ. ուր իրենց ազգային գոյութիւնն իսկ, կարողիմ ասել, մոռնալով, երբ մէկը նոցա յիշէր իրենց ազգութիւնն, եկեղեցին, դպրոցը և ազգային դաստիարակութիւնն, սիւսկեան սառնութեամբ մ' խօսողին երեսն ի վեր կը նայէին, կարհամարհէին:

Այսօր, փառք ժամանակին և դիպող պարագաներուն, զի այն սպառնացող վտանգին առջէն կիսով չափ առնւեր է. առջէն առնող դպրոցի բարեկարգութիւնն և ինչպէս ասացի, մերթ ընդ մերթ տեղի ունեցած ազգային հանդէսներու մէջ ճառագայթող շեշտակի ձայներն են եղած, որ Ագքիրմանի Հայոց իրենց հայկական դրօշմը ի յերկինս վեհօրէն, և յերկրի իրենց ծակատին վրայ կը ցուցնեն զգալապէս:

1881 Նոր տարւոյն երեկոյ. խուռն բազմութիւն մ' Հայոց եկեղեցւոյն սրահը, ներսն ու դուրսն կը վխտային: Մենակ հայերն չէին իրենց դպրոցային հանդիսին հանդիսատեսներն, այլ ոռուս սպայք և մինչև դպրոցական հրէուհի մ' իւր դաշնակով, որ փափագած էր գալ և Հայոց հետ Հայոց հանդիսավայրի մէջը մի քանի գեղեցիկ ժամեր անցունել. և իւր դաշնակի նուազը խառնել հայ ուսանողաց ազգային երգոց ներդաշնակութեան հետ:

Նոր տարւոյն մանկտին որ խմբուելով իրենց շարքերէն շարքեր, շարքերէն շարքեր, նախ փառաբանական աղօթք մ' երգեցին, և երկնից անմեղներու ալեւլուեաններու շարք ազգեցին հոգւոյս և սրտիս, ո՞վ անմեղութիւն, և իրենց զգածուցիչ երգեր. շար սիրտ մ' անգամ կը զահաւիժեն:

Մարգրիտ և Եւա—երկու դեռահաս աշակերտուհիք. (երկիրս կը դառնայ թէ արեւը.) սա ուսումնական աշխարհացուցի մի դասի վերայ ձևեր գծելով,

և խօսելով ժողովուրդն ասանց հեշտօրէն, և ոմանք հետաքրքրութեամբ ունէն կը մատուցանէին:

Այս տեսարանին յաջորդեց երկրորդ մը:

Կարապետ, Աթանաս և յետոյ Յարութիւն պատանիները, որք քաղաքական մի քանի խնդիրներու վրայ համառօտակի անսութիւն մ' ընելով, առաջին և վերջին աշակերտներու եռանդուն վիճարանութիւնն հանդիսականաց մէջը զրգիռն և ծափահարութիւնն շատցուց

Կատարինէ Մալխասեան. 14 տարեկան հասակ մ' որ նոր կը դառնար ոչ Հայ դպրոցէն Հայոց դպրոցը, խանդով մ' սկսաւ մեծին Վարդանայ դժբաղող Ըուշանիկին բանաստեղծախառն պատմութիւնն և արատասուլքով մ' վերջացուց: Հանդիսականներն վայրկենական այն մեխամաղձոտ վիճակէն չզիտեմ ինչպէս փութով ուշաբերեցան այն պահուն և երկիցս ծափահարելով պատուեցին այս զգայուն ծաղկէ հասակը: Այս ճառախօսութեանց և զրամաներու կընդմիջէին մերթ ազգային երգեր. և Պ. Ծերուն հոգաբարձուի ուսեալ կատարինէ օրիորդի ճարտար և զիւթիչ զաշնակահարու. թիւնն հանդիսին վրայ երկնային զմայլում մ' կը սրսկէր:

Աւելիս Վայանցեան Վանցի

ՆԱՄԱԿ ԱԴՔԻՐՄԱՆԻՅ:

Ինչպէս այլ և այլ պարագաներու մէջ միշտ յայտնած է Ազգբիրմանի Հայ հասարակութիւնը իւր զգացմունքը՝ նոյնպէս և յսկզբան ամսոյս իւր ցրտացեալ երակներու մէջ նոր արիւն հայութեան նորոգելով, հանդէս կկազմէր զիմաւորել իւր սիրելի և արժանընտիր հովիւ Գեր. Տ. Մակար Սրբազանին: Գպրոզականքն եկեղեցւոյ գաւիթն ու ժողովուրդն հայոց՝ խառն օտար ազգաց հետ՝ եկեր և խոներ էին պարտիզին մէջը: Աստիկանաց հսկողութեան ներքեւ միշտ կարգաւորեալ:

Մինչ նորին Սրբազնութիւնն արտաքին գաւիթն դռնէն ինեքս կմտանէր, զպիրքն զհոգևորսն՝ և ուսանողքն ազգային երգեր երգելով՝ օղը կթնկաւ ցընէին և սրտերն ամենուն ի հայրենասիրութիւն կվառւէին. և օտարազինքն իսկ զոգցես կզգածւէին հայոց այս հանդէսը զիտելով:

Զինչ ինչ որ ներշնչէին ի ժամուն ի սրբազանն, ձայնիւ արտայայտեց. քարոզ մի խօսեցաւ եկեղեցւոյ մէջ և իւր սիրալիր ողջունի ձայնը խաղաց հանուրին ականջը և սրտերն ամենուն բերկրութեամբ խայտացին:

Յեկեղեցւոյ ի լսարանն այցելելով՝ սրբազանը ժամու մը շափ ևս անդ հանդիսին նախագահելով՝ առ ինքն ուղղեալ ուղերձները լսեց. և ասոնց ի պատասխանի՝ հակիրճ և իմաստուն ատենաբանութեամբ և օրհնութեամբ մը կնքեց հանդէսը:

Քան զայս աւելի տղաւորիչ և զմայլելի բանն եղաւ Ազգբիրմանց համար՝ իր ծխական երկսեռ զպրոցին հոգաբարձու Մեծապատիւ Ծերուն